

նում է սրանում հինգ կամ վեց մարդա-
ներ անդրադարձնում և անհետ կորչում են լը-
րագրության մեջ և համայնքների ժողովում
թիւրքաց բարբարոսութեան դէմ արտաքին
գործերի միջնորդը հետաքրքրվում է, խո-
սում են, թէ պէտք է քննութիւն անել,
ուղարկել յատուկ ներկայացուցիչներ, խիստ
պատժել յանցաւորներին և այլն: Յետոյ
տիրում է լուսթիւն: Մի քանի ժամանակ
անցած՝ սարսափները սկսվում են աւելի
մեծ ծաւալով Հայաստանի մի ուրիշ մա-
սում: Նոյն դատարի բողոքները և նոյն ան-
պտուղ ոգևորութիւնը կը սկսվի Անգլիա-
յում, և այսպէս շարունակ մինչև որ Հա-
յաստանում չի մնայ այլ ևս մի հատ հայ:
Պոլսում երկրի, որ ամբողջ աշխարհից ան-
ուշադրութեան է մատնված:

Օգոստոսի «Одесский Листок» լրա-
գիրը հետևեալ տեղեկութիւնն է ստացել.
«Հայաստանում կատարված բարբարոսու-
թիւնների հարցը քննելու համար ուղարկ-
ված եւրոպական յանձնաժողովի հետ միա-
պիսի սուլթանը թիւրքերից բաղկացած մի
յանձնաժողով ևս ուղարկել: Երբ այդ յանձ-
նաժողովը հասաւ Մուշ, հայերը ցանկա-
ցան խնդրագիր մատուցանել նրան, բայց
զրազիր չը կարողացան գտնել, որովհետև
խնայողութիւնները պատժել սպառնալիքով
արգելելով գրադիրներին խնդրները գրել
հայերի համար: Հայերը հարկադրված էին
իրանց խնդրները գրել հայերէն լեզուով
իշխանութիւնների հետ ունեցած երկար
կռիւղի և ջանքերից յետոյ, հայերին աջող-
վեց ներկայանալ յանձնաժողովին: Բայց
որքան մեծ էր նրանց զարմանքը, երբ նը-
րանք յանձնաժողովի անդամների թիւի մէջ
տեսան Սասունի բարբարոսութիւնների գլխա-
ւոր հերոսներից մէկին: Եւ ինչ՞ հայերը չը
կարողացան. զգալի իրանց, հայերին աջող-
դակեցին. «Այս մեր ճշնոյններից մէկը»:
«Այդ եւ չեմ» պատասխանեց շփոթված
պաշտօնեան:—այդ քիւրդերն են:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՆԱԾԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց բնակչության անբաժան աղքատ է գե-
ղարուեստական գրականութիւնը, որ ամեն ան-
գամ, երբ լոյս է տեսնում մի նոր ինքնուրոյն
վիպագրական աշխատութիւն, նա մեծ հետա-
քրքրութիւն է ցուցնում, որովհետև ծագում է
մի յայտ, թէ գուցէ, վերջապէս, մեր գրականու-
թիւնը անհետացել է քաղաքակրթութիւնը: Ամեն
տեղ նրանք եղել են ներկայացուցիչ ոչ միայն
յննովոր կառավարութեան, իբրև հակադրութիւն
օրէնքի վրա հիմնվող կառավարութեան: Իբր աս-
աւորով՝ այս կեանքում նրանք ունեցել են մի-
այն անողորմ ֆատալիզմ և իբր այդ ֆատա-
լիզմի վարձ հանդերձեալ կեանքում՝ մի զգայաւոր
բական դրախտ:

Շնորհաբեկ են առնել մարմնացումը գի-
նորական ուժի: Այդ յառաջ խաղացող նգովքն
ու պատմահար կորուստ էր սպառնում ամբողջ
Եւրոպային: Եթէ նա կանգ առաւ, և այն ոչ թէ
մի, այլ մի քանի անգամ, այդ եղաւ մի եւրոպա-
կան ազգայնականութեան հերոսութեան շնորհիւ,
որը ապրում էր հենց այն երկրներում, որոնց
մի մասը այժմ դարձել է պատերազմի բնակ և դի-
ւանագիտական գործունէութեան մտառանջող ա-
ռարկայ: Հին ժամանակները ամբողջ արեւմտեան
քրիստոնէութիւնը համակրութեամբ էր վերաբեր-
վում ընդհանուր թշնամու դէմ մղված կռիւն և
նոյն իսկ թէթորածից կատարի կռիւների միջո-
ցին, եթէ չեմ սխալվում, անգլիական եկեղեցի-
ներում աղօթքներ էին կարդում, աջողութիւն
մաղթելով կայսրին, հռոմէական կաթողիկոսին
ոչ թէ ևս զգեցութեան պետին, որ պատերազմ էր
վարում թիւրքերի դէմ:

Սակայն թէ պէտք է թիւրքեր ներկայացնում էր
ոյժը ի հակադրութիւն օրէնքի, այնու ամենայնիւ
նոյն իսկ ուժի վրա յենվող կառավարութիւնը չէ
կարող պահպանվել առանց մտաւոր տարրի օգ-
նութեան, մի տարր, որից դուրս էր նա: Այդ
տեղից առաջացաւ մի տեսակ համբերողութիւն
դատմանութեան, բռնակալութեան և առաջակարա-
բոյութեան մէջ, մի երկոյթ, որ հազադարձ է
մարդկային պատմութեան էջերում: Քրիստոնէա-

թիւնը հարստանալու է մի գեղարուեստական
գործով, մի էստետիկական երկարութիւնով:
Բայց ամեն անգամ մարդ ստիպված է լինում
խոստովանել, որ այդ յոյսը չիրականացաւ:
Ինչ է արդեօք պատճառը այդ անբերելիութեան,
այդ աղքատութեան: Գրողները, վիպագրողները
քիչ չունենք. քիչ չեն և լոյս տեսնող վեպերը,
վեպիկները, պատմական բամբակներ և այլն, բայց
այդ գրողներից և վիպագրողներից և ոչ մէկը չը
կարողացաւ ստեղծել մինչև այսօր մի բան, խո-
շոր գեղարուեստական արտագրութիւն, ստեղծել
մի տիպ, որ փոքր ի շատէն ընդհանուր բնաւ-
ութիւն կրէ:

Այդ ցաւալի երկոյթի պատճառները, ի հարկէ,
շատ բարդ են, բայց, մեր կարծիքով, այդ պա-
ճառներից մինն ևս այն թիւրքիմացութիւնն է,
որ տիրապետել է և ներկայումս էլ տիրապե-
տում է մեր գրողների մէջ գեղարուեստական
գրականութեան վերաբերմամբ:

Մեր մէջ ընդհանրապէս տարածված է այն հա-
մոզմունքը, և այդ համոզմունքը զարգացման նը-
պաստում են մեր գրական բեղմնակերպները, թէ
գրականական-գեղարուեստական արգելափակ-
չները արժանաւորութիւնը կայանում է նրա-
նում, որ վիպագրողը կարողանայ արտաբերել իր
պէտք, ըմբռնել իր ժամանակի, կամ որոշ էպո-
խայի ինտելիգենցիայի մէջ տիրող նոր հոսանք-
ները և ուղղութիւնը: Կարծւում է, որ վիպագրո-
ղը միայն այն ժամանակ է գեղարուեստական
տաղանդ ցոյց տալիս, երբ նա կարողանում է
ըմբռնել ժամանակակից, բազմակի իդէաները և
ձգտումները, երբ նա ուշադրութիւնը չէն վրի-
պում ընթերցողի պահանջները և ժամանակի հրա-
տապ խնդիրները: Այդ տեսակ համոզմունքը շատ
սխալ գաղափար է ներշնչում գրողներին գրա-
կանութեան գեղարուեստականութեան մասին և
մտորոնքում է նրանց: Եւ ահա ինչու:

Վաղեմ արտաբերող յատկութիւնով օժտված վիպա-
գրողը հանդիսանում է աւելի մի տաղանդաւոր ֆի-
լիսոփայ, քան մի գեղարուեստագէտ: Խոշոր գե-
ղարուեստական տաղանդը, գրողը, ձգտում է ա-
ւելի լայն, խոր նպատակի, նա ախտաւոր է ա-
ստեղծել ոչ թէ անցողական, վայրկեական
կեանք ունեցող տիպեր, այլ ամբողջ դարեր ապ-
րող տիպեր: Թէև նա այդ տիպերը վերցնում է
իր ժամանակից, ժամանակակից կեանքից, բայց
այնպէս է լուսաւորում նրանց, որ մեզ համար
միանգամայն հասկանալի են լինում այդ տիպերը
ստեղծող պատճառները և նրանց հոգեբանական,
պատմական, սոցիոլոգիական և փիլոսոփական
պայմանները: Մենք չենք ստում ևս այդ անկարելի

է, որ խոշոր գեղարուեստագէտը զանազանութեան
տալ ժամանակի, անցողական տիպերը, օրվայ
հրատապ հարցերը, բայց նրա ստեղծագործու-
թեան բուն նպատակը այդ չը պէտք է լինի. նա
չը պէտք է ջանայ հերոսներ ստեղծել, այլ նա
պէտք է այդ անցողական տիպերը այնպէս դուրս
բերի, որ մենք նրանցով ճանաչենք էպոխան,
հասկանանք այդ էպոխայի ոչ միայն ալ տարին,
այլ և ներքին հոգեբանական կողմը:

Այն գրողները, որոնք կարողացել են այդ եր-
կու ձգտումները միացնել և այդ միացնելու ա-
րուեստը կատարելագործութեան հասցնել, այն է
ըմբռնել ժամանակի բնորոշ գծերը և նրանց
այնպիսի խորութիւն տալ, որ նրանք ամբողջ
դարերի ընթացքում հասկանալի մնան,—այդ տե-
սակ գրողները՝ համարվում են ամենախոշոր գե-
ղարուեստագէտներ: Բերենք մի երկու օրինակ:
Ում յայտնի չէ, որ Հէկապիլը իր բոլոր տիպերը
վեր է առել ժամանակակից երևոյթներից, կեան-
քից: Համբիտ ներկայացուցիչ է ժամանակակից
էպոխայի, բայց և լայն հանրամարդկային տիպ
է, այնքան հանրամարդկային, որ կարծես մենք
նրա հետ ամբողջ մեր կեանքում ծանօթ ենք,
կարծես նա մեր եղբայրը և բարկամը լինի:

Նոյն ներկայացումն են մեզ և Տուրգենիւնը:
բոլոր նշանաւոր տիպերը Ռուսիայի իր էպոխայի
տիպ է, բայց և մինչև այսօր նա մնում է մոտա-
ւոր և բարոյական հոգի եռանդի տիպ, անշար-
ժութեան և անսահման խաւարի մէջ երևան ե-
կած եռանդի տիպ:

Մեր փոքր ի շատէ տաղանդ ունեցող վիպա-
գրողները, դժբախտաբար, տեսել են խոշոր տա-
ղանդաւոր գրողների մէջ միայն այդ էրօպէն օր-
սալու: Եւ արդեօք ինչու, առանց տեսնելու միւս,
աւելի մեծ յատկութիւնը և կարծել են թէ այդ
էրօպէն որսալու: Եւ արդեօք ինչու գեղարուեստի
հիմնական օրէնքն է և գեղարուեստական արտա-
գրութիւնների միակ նպատակը:

Մասամբ, կարծում ենք, այդ է պատճառը, որ
մեր հայերիս մէջ մինչև այսօր դուրս չեկաւ մի
վիպագրող, որ կարողանար մի միայն, մշտա-
կան տիպ ստեղծել, որովհետև օրվայ արմա-
ղութիւնը, բազմի պահանջը որսալը նրանք հա-
մարել են գրողի համար միակ արժանաւորութիւն:
Նոյն իսկ Բաքիյին, մեր վիպագրողների մէջ ամե-
նապատանգաւորը, չէ կարողացել մի յարատեւ,
փոքր ի շատէ, ընդհանուր տիպ ստեղծել, այլ
նրա տիպերի մեծագոյն մասը անցողական բնա-
ւորութիւն են կրում:

Խոսելով Հէկապիլի, Հուգոյի և Տուրգենիւնի մա-
սին, մենք զբաղւում չենք կամենում համեմատել

մեր վիպագրողները նրանց հետ. ոչ, հայ միտքը և
գրականութիւնը դեռ չառ և չառ հեռու է Հէկա-
պիլից, Հուգոյից և նոյն իսկ Տուրգենիւնից ստեղ-
ծելուց. բայց, կարծում ենք, որ մեր վիպագրողնե-
րը, եթէ մի քիչ աւելի ուսումնասիրեն եւրոպա-
կան խոշոր և մեծ գեղարուեստագէտ հեղինակների
գրականութիւնը, նրանք գուցէ կը զգային այդ պա-
կասութիւնը՝ աշխատելով փոքր ի շատէ յարատեւ,
մնաւոր տիպեր ստեղծել:

Հ. Ա.

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Մեր գաւառներում գիւղերի և նոյն իսկ քա-
ղաքների հաղորդակցութիւնը շատ անախաճնելի
է: Ինչպիսի մէջ է գտնվում. Հանապարհները նեղ,
անյարմար, փոսերով, առանց կամուրջների այն
տեղերում, ուր գետակներ են անցնում, անտանե-
լի զառիթայներով և օձապտոյտներով:

Գիւղացին, չնայելու հանապարհների այդ ան-
կարգ գրոթեան, անկարող է սալ գործածել շատ
տեղերում և ստիպված է ձիերի վրա բեռնված
տուն բերել խոտը, հացի խուրճերը և այլ մթեր-
ները: Յաճախ նա թողնում է մօտիկ գիւղը և կա-
տարում է հեռու չրջաններ միայն այն պատճա-
ռով, որ կարճ, մերձաւոր գծի վրա խոր ու բորդ,
քանդված, հեղեղներով փչացրած տեղեր կան:

Հաղորդակցութեան ուղիների բարեկարգութիւ-
նը ամենակարեւոր խնդիրներից մէկն է, որի վրա
ամենամեծ ուշադրութիւն են դարձնում բոլոր քա-
ղաքակրթ երկրները: Գաւառի հաղորդակցութիւնը
կատարվում է սահմանափակ կերպով, մեծ դը-
ժուարութիւններով և անյարմարութիւններով, այն-
քան յետ է մղվում ապրանքների տեղափոխու-
թեան և փոխադարձ յարաբերութիւնների գործը:
Խուսառտանի ներքին նահանգներում այդ գոր-
ծին զեկալում է հանդիսանում գլխաւորապէս
գեմաւ օւն: Անդրկովկասում այդ հոգսը յանձն-
ված է նահանգական և գաւառական վարչութիւն-
ներին, բայց չէ վերածված մի այնպիսի կատա-
րեալ սխալման, որ կարողանար բաւականութիւն
տալ տեղական անհրաժեշտ պէտքերին:

Այս գործում պէտք է մեր տեղական ժողովուր-
դը, գիւղական կամ քաղաքային հասարակութիւն-
ները գիմեն ինքնօգնութեան և չը սպասեն, որ նը-
րանց ստիպեն այս կամ այն կամուրջ շինել, զա-
ռիթայը դրսեւել, ճանապարհը լայնացնել: Մենք
գիտենք շատ զգալի, ինչպէս գիւղացիները, ի-
րանց ծուլութեան և ներքին երկպառակութիւն-
ների պատճառով, հրաժարվում են դրսեւել այն
ճանապարհները, որոնք գտնվում են գիւղական

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.